ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
Գյումրի համայնքի ղեկավար՝
Վարդան Ղուկասյանին
ԿԱՏԱԿՕՖՖ Մշակութային ՀԿ-ի նախագահ՝
Գնուն Մարտիրոսյանից

ԴԻՄՈՒՄ

Հարգելի՛ պարոն Ղուկասյան,

Տեղեկացնում ենք, որ 2025 թ. սեպտեմբերի 6-ից 18-ը Փարիզում՝ Théâtre du Soleil հեղինակավոր թատրոնում, կանցկացվի միջազգային “Festival Départ d’Incendies” թատերական փառատոնը, որի պաշտոնական հրավերը ստացել է մեր KatakOff թատերախումբը:

Թատերախումբը ձևավորվել է հայ-ֆրանսիական մշակութային համագործակցության արդյունքում՝ ֆրանսահայ դերասան Սերժ Ավետիքյանի նախաձեռնած Atelier d’art dramatique ծրագրի հիման վրա:
Թատերախմբի գեղարվեստական ղեկավարը Théâtre du Soleil-ի առաջատար դերասան Արման Սարիբեկյանն է, ով նախագիծը դարձնում է միջազգային ստեղծագործական համագործակցության վառ օրինակ:

Փառատոնի կողմից պաշտոնական հրավեր է ուղարկվել խմբի 10 անդամներին, որոնցից 2-ը Գյումրիի երիտասարդ դերասան-ռեժիսորներ են: Նրանց մասնակցությունը նման հարթակում ոչ միայն անձնական ձեռքբերում է, այլև Գյումրիի մշակութային ներուժի ներկայացում միջազգային բեմում:

Հաշվի առնելով ճանապարհածախսերը, մասնավորապես՝ ավիատոմսերի արժեքը, որը կազմում է մոտավորապես 150,000–170,000 դրամ մեկ մասնակցի համար, խնդրում ենք դիտարկել Գյումրիից մասնակցող երկու ներկայացուցիչների տոմսերի ծախսերը համաֆինանսավորելու հնարավորությունը:

Բացի այդ, պատրաստ ենք փառատոնի պաշտոնական նյութերում, պաստառներում և միջոցառման ընթացքում Գյումրու համայնքապետարանին նշել որպես աջակցող հովանավոր, ինչը կներկայացվի միջազգային լսարանին՝ Փարիզում:

Կից ներկայացնում ենք փառատոնի հրավերը և մասնակցության հաստատման փաստաթղթերը:

Նախապես շնորհակալություն ենք հայտնում ուշադրության, աջակցության և համագործակցության պատրաստակամության համար:

Հարգանքով՝

Գնուն Մարտիրոսյան

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
Քարտուղարության բաժին
ՍՏԱՑՎԱԾ է 06.08 2025 թ.
ԳՐԱՆՑՎԱԾ է N 11102